ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

11 ՀՈՒԼԻՍԻ
2025 թ.
№ 11 (1148)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Ավարտվեց 2024-2025 ուսումնական տարին: Մանկավարժական համալսարանում հունիսի 30-ից հուլիսի 4-ն ընկած ժամանակահատվածում մեծ հանդիսավորությամբ ճանապարհեցին 10 ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած 1653 շրջանավարտի:

Հասուն, պատասխանատու, լի հույսերով ու երազանքներով...

Գեղարվեստական կրթության և Կուլտուրայի ֆակուլտետներ

Մարդու կյանքի յուրաքանչյուր շրջափուլ յուրովի կարևոր է, իսկ երիտասարդների համար այն առավել հետաքրքիր է, սպասումներով լի: Եվ ահա այդպիսի մի շրջափուլ է ուսանողական կյանքի ավարտը: Քայլ, որին հաջորդելու եմ նոր քայլեր՝ նոր հետաքրքրություններին ընդառաջ, նոր ոգևորությամբ ու խանդավառությամբ:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հունիսի 30-ը ոչ սովորական օր էր ոչ միայն շրջանավարտների, այլև նրանց ծնողների, հարազատների, ինչպես նաև դասախոսների համար: Համալսարանի մեծ դահլիճում, հանդիսավոր պայմաններում, բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական որակավորման վկայականներ ստացան Գեղարվեստական կրթության և Կուլտուրայի ֆակուլտետների շրջանավարտները:

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներն ազդարարեցին կարևոր, հիշարժան և հուզիչ միջոցառման մուտքը՝ փաստելով. «Այսօր տոն է, տոն, երբ մի ամբողջ ճանապարհ ամփոփվում է մեկ վայրկյանում, մեկ ձեռքսեղմամբ, ինքնավստահ կեցվածքով՝ այս մի փուլն էլ հաղթահարեցինք...»: Ուսանողները խոստովանում են՝ այդ ճանապարհի ամեն քայլը անցել են դասախոսների ուղեկցությամբ. «Նրանց նվիրվածության, հավատքի ու սիրով լցված աշխատանքի շնորհիվ մենք այսօր կանգնած ենք այս բեմին՝ հասուն, պատասխանատու, լի հույսերով ու երազանքներով: Շնորհակալ ենք, մեր սիրելի դասախոսներ, մեր ուղին լուսավորելու և մեր հաջողությունների համար»:

Այո, թերևս ուսանողական տարիները մարդու կյանքի ամենագեղեցիկ շրջանն են. անքուն գիշերները, դժվար քննությունները, տագնապն ու ոգևորությունը հետո դառնում են քաղցր հուշեր:

Ուսանողներին ավարտական շրջափուլի առթիվ համալսարանի ողջ համակազմի անունից ողջունեց և շնորհավորանքներ հղեց ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

Ռեկտորը շնորհավորեց ֆակուլտետների ղեկավարներին և դասախոսական կազմին, որոնց հետ ուսումնառության ընթացքում ուսանողները կիսել են իրենց հույզերը, ձեռքբերումները, առանձին դեպքերում՝ նաև ձախողումները:

Սրբուհի Գևորգյանն իրավացիորեն նշեց, որ շրջանավարտները հաղորդակից են եղել մասնագիտական կրթության այն ոլորտին, որտեղ արժեքանությունը պայմանավորել են այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Ղուկաս Չուբարյանը, Հովհաննես Զարդարյանը, Էմմա Ծատուրյանը, Հենրիկ Մալյանը, Ալբերտ Յավուրյանը, Ֆրունզե Դովլաթյանը, մշակութային ժառանգություն, որը ոչ միայն Մանկավարժական համալսարանի պատմությունն է, այլև Հայաստանի Հանրապետության մշակութային պատմության անքակտելի մասնիկը:

«Այն պատվիրանները, այն արժեքները, արվեստի արտացոլման գեղագիտական ճաշակի ձևավորման և զարգացման այն բաղադրիչները, որոնք հիմք են հանդիսացել, շարու- ➤2

Կայացավ Գիտական խորհրդի նիստը

Հուլիսի 4-ին կայացավ Մանկավարժական համալսարանի ուսումնական տարեվերջի նիստը: Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց Ուսանողական խորհրդին՝ շրջանավարտներին ավարտական վկայականների հանձնման հնգօրյա հանդիսության նախաձեռնության և պատշաճ կազմակերպման համար՝ փաստելով, որ այս տարի ճանապարհեցին 1653 շրջանավատի՝ իրականացնելու իրենց առաքելությունը, և հատուկ նշեց, որ շրջանավարտ տղաները խոստացան անպայման համալրել ուսուցչական հանրության շարքերը:

Օրակարգի հիմնական հարցերին անցնելոց առաջ ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը դոցենտի և պրոֆեսորի շնորհման վկայականներ հանձնեց Սևադա Սարգսյանին, Ամալյա Պետրոսյանին և Անժելա Մինասյանին:

Ռեկտորը շնորհավորեց բուհի հոբելյարներին՝ Էդուարդ Մկրտչյանին, Մնացական Մանուկյանին, Մեժլում Երիցյանին, Գևորգ Թադևոսյանին, Բորիս Խոդերյանին, Աստղիկ Գրիգորյանին, Ռուզան Դոլուխանյանին և Անուշ Եղիազարյանին:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց Գիտական խորհրդին կից հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Աելիտա Դոլուխանյանը: Նա ներկայացրեց ամբիոնների վարիչների մրցույթին հավակնող թեկնածուներ Աելիտա Գուրգենի Դոլուխանյանին՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դա- ➤2

Հասուն, պատրաստվածությամբ, մի հույսերով ու երազանքներով...

➢1 նակվում են այսօր էլ՝ ի դեմս Գեղարվեստական կրթության ֆակուլտետի տաղանդաշատ մասնագետների: Սուրեն Սաֆարյան Արա Հակոբյան կրտսերները շարունակում են իրենց դինաստիաների ավանդույթները»,-փաստեց ռեկտորը:

Անդրադառնալով Կուլտուրայի ֆակուլտետին՝ ռեկտորը նշեց՝ Կարեն Գևորգյան, Արա Գևորգյան՝ մարդիկ, որոնք այսօր էլ իրենց ստեղծագործական դրսևորումներով պայմանավորում են կոնկրետ չափանիշ, իսկ լրագրության ոլորտում, անշուշտ, Լևոն Գալստյան, ում սցենարները անմահացնում են մեր կենսակերպի, մեր կյանքի ծեռքբերումների տարբեր հարցադրումներ:

Համալսարանի մշակութային այս ֆակուլտետները ուսանողներին հնարավորություն են տվել ունենալ երկխոսություն և ձևավորել սեփական ձեռագրաբանությունը:

Ռեկտորը հորդորեց շրջանավարտներին՝ յուրաքանչյուր վայրկյան ապրեք այնպես, որպեսզի զգաք ոչ միայն արվեստի արտացոլման գեղագիտական հնարավորությունը, այլև իրականացնեք ձեր ներքին հոգեկան ռեսուրսով պայմանավորված մոտեցումները, որտեղ մեկտեղված են կրթությունը, գիտությունը, մարդկային հարաբերությունների բարդ ամբողջականությունը, ժամանակի շունչը և ձեր ծնողների պատգամները, որ տածում են ձեր նվիրական երազների հանդեպ: Սրբուհի Գևորգյանը ուսանողներին մաղթեց՝ թող տիեզերական անսահմանության ներքո ձեզ ուղեկցեն բարին, գեղեցիկը և վսեմը:

Շրջանավարտներին շնորհավորեցին դեկաններ Արա Հակոբյանը և Գևորգ Թադևոսյանը, որից հետո կատարվեց դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

«Տարիների ընթացքում մեր ուսանողները կրթվել են մի օջախում, որտեղ պահպանվել և պահպանվելու են այն ավանդույթները, որոնք ձեռք են բերվել տարիների ընթացքում:

Դուք ուսումնառություն եք առել այնպիսի մեծանուն արվեստագետների միջավայրում, որոնք մեր հանրապետության լավագույն անուններն են»,-ասաց դեկան Արա Հակոբյանը՝ շնորհավորելով և բարին մաղթելով շրջանավարտներին:

Հավելենք, որ այս ուսումնական տարում Գեղարվեստական կրթության ֆակուլտետն ավարտեց 159 շրջանավար, որից 49-ը՝ կարմիր դիպլոմով:

Կուլտուրայի ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանը դեմքով ճանաչում է բոլոր շրջանավարտներին, հիշում է նրանց առաջին մուտքը ֆակուլտետ: Այսօր արդեն 196 շրջանավարտի ճանապարհում են դեպի նոր կյանք, նրանցից 27-ը ուսումնառությունն ավարտել են կարմիր դիպլոմով: Դեկանը լիահույս է՝ արվեստի ոլորտի բոլոր այս շրջանավարտները չեն բավարարվի ձեռք բերածով, կշարունակեն կրթվել, իսկ ֆակուլտետում նրանց միշտ սիրով կսպասեն:

Համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ Ռիտա Գևորգյանն էլ շնորհավորեց շրջանավարտներին՝ մաղթելով նրանց շարունակական հաջողություններ իրենց հետագա գործունեության մեջ:

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի 7 շրջանավարտներից 3-ը գերազանցության ավարտական վկայականներ ստացան:

Կայացավ Գիտական խորհրդի նիստը

➢1 սավանդման մեթոդիկայի ամբիոն, Սուրեն Դավթի Դանիելյանին՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Վազգեն Համբարձումյանին՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, հանգամանորեն անդրադարձավ նրանց գիտամանկավարժական հարուստ գործունեությանը:

Ամբիոնների վարիչներին հավակնող թեկնածուները ներկայացրին իրենց պաշտոնավարման հետագա ընթացքի հեռանկարային ծրագրերն ու դասավանդման նորարարական մոտեցումները:

Փակ գաղտնի քվեարկությամբ երեք ամբիոնների վարիչներին հավակնող թեկնածուներն էլ առաջիկայում կշարունակեն պաշտոնավարել որպես ամբիոնների վարիչներ:

Մանկավարժական համալսարանի 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է 1653 շրջանավարտ:

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը ներկայացրեց 2024-2025 թթ. Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հարցը, ներկայացրեց 47 մասնագիտական կրթական ծրագրերով հունիսի 15-ից հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում բուհում անցկացված առկա, հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի և առկա համակարգի մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքը, անդրադարձավ առանցքային հարցերին, հանգամանորեն ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացի բացթողումներն ու ռիսկերը, հանդես եկավ առաջարկություններով:

Համալսարանի գիտական քարտուղար, պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց Գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների տարեկան հաշվետվությունները, որի շուրջ տեղեկատվությամբ հանդես եկան նախագահներ Ալիտա Դոլուխանյանը, Գևորգ Թադևոսյանը, Մեժլում Երիցյանը:

Գիտական խորհրդի նիստում հաստատեցին ատենախոսության թեմաներ և երաշխավորեցին գիտամեթոդական ծեռնարկներ:

Նաիրա Սաֆարյանը ներկայացրեց, իսկ Գիտական խորհուրդը հաստատեց ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի կանոնակարգը, ինչպես նաև վարժարանում վճարովի ծառայությունների իրականացման նոր հնարավորությունները:

Գործունեության սուբյեկտը մարդն է, անհատականությունը

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Հատուկ կրթության ֆակուլտետներ

Շրջանավարտներին շնորհավորեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա ընդգծեց, որ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Հատուկ կրթության ֆակուլտետներն իրենց ուրույն գունապնակն ունեն համալսարանի ֆակուլտետների շարքում: Ռեկտորը փաստեց. «Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի և Հատուկ կրթության ֆակուլտետները պատասխանատու են ոչ միայն համալսարանական գործընթացների, այլև Հայաստանի Հանրապետությունում հոգեբանամանկավարժական ոլորտի կադրերի որակական պատրաստման, կադրերի որակական կարողությունների իրացման ու մարդու մեջ մարդու հոգեկանի փոխներգործման այնպիսի մեխանիզմներ ձևավորելու համար, որը ոչ միայն մասնագիտություն է, այլ նաև հստակ առաքելություն»:

Ռեկտորն ընդգծեց, որ վերոհիշյալ մասնագիտությունները մի փոքր տարբերվում են, և նրանց աշխատանքը ուսուցիչներ պատրաստելու առաքելությամբ չի պայմանավորված, սակայն կրթության ոլորտի յուրաքանչյուր սուբյեկտ՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն մանկավարժական ոլորտ, բոլորն անմիջականորեն ունեն հոգեբանական աջակցության որակական փոխներգործության անհրաժեշտությունը:

Դիմելով շրջանավարտներին՝ Սրբուհի Գևորգյանն ընդգծեց՝ շրջանավարտները երեկվա հետ համեմատության մեջ կարող են կարևորել իրենց այսօրվա մասնագիտական կարողությունները, մասնագիտություններ, որտեղ գործունեության սուբյեկտը մարդն է, անհատականությունը, ֆակուլտետներ, որոնք մարդկային որակների օժտվածությամբ են պայմանավորում կարևոր ձեռքբերումները:

«Դուք ունեք այն հզոր առավելությունը, որ սուբյեկտիվ օրիգինալ մոտեցումներով միշտ էլ գերազանցելու եք արհեստական բանականությանը, որը երբևէ չի կարող փոխարինել ձեզ»,-ասաց ռեկտորը՝ ընդգծելով, որ մասնագիտությունը պահանջում է մեծ հումանիզմ ու բարություն:

Շրջանավարտներին շնորհավորեցին ֆակուլտետների դեկանները:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գոհար Հովյանը շնորհավորեց բոլորին և կյանքի այս կարևորագույն փուլում մաղթեց միասնականություն: Մաղթեց բոլորին արժանապատիվ ապագա և շրջանավարտներին հորդորեց, որ իրենց ձեռքբերումները կիրառեն հանուն նոր հաղթանակների և ի բարօրություն իրենց չքնաղ հայրենիքի:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ռուզաննա Պետրոսյանը շնորհավորելով շրջանավարտներին՝ ընդգծեց, որ ստանձնում են էլ ավելի կարևոր պատասխանատվություն, որ մեծ անելիք ունեն, և ոչ մի արհեստական բանականություն չի կարող փոխարինել իրենց:

«Այսօր ստանալու եք այն այցեթուղթը, որով տեղափոխվելու եք էլ ավելի լայն հարթակ, ուր կարողանալու եք իրացնել ձեզ»,-ամփոփեց դեկանը:

Ռեկտորը և դեկանները շրջանավարտներին հանձնեցին ավարտական վկայականները և մաղթեցին բարձր պահել հարազատ համալսարանի պատիվը:

Հիշեցնենք, որ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետն այս տարի ավարտեց 306, իսկ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը՝ 131 ուսանող, նրանցից 127-ը՝ կարմիր դիպլոմով:

«Ինչ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս կտակում եմ տիրապետել հայոց լեզվին:
Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից, անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում:
Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ և գաղափարների մեջ ինչ համար ամենաթանկը հայոց լեզուն է:
Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզու:
Գիտցեք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը:
Ցանկանում եմ երջանկություն բոլորիդ»:

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մաղթեցին մասնագիտական նոր ձեռքբերումներ

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետներ



Հուլիսի 2-ին ավարտական վկայականներ ստացան համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, նաև Կենսաքիմիայի և աշխարհագրության ֆակուլտետների շրջանավարտները:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց երկու ֆակուլտետների շրջանավարտներին: Նա ընդգծեց, որ ուսուցչի մասնագիտությունը 21-րդ դարում ամենապատվաբերն է, ամենաբարդ շրջափուլը հաղթահարող մասնագիտություն, որը հայտնվել է մարտահրավերների թիրախում: «Այսօր իրապես պիտի փաստենք, որ բնագիտական առարկաների ոլորտին ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում այսօր նախապատվություն կարծես թե քիչ են տալիս:

Այսօր աշխարհը կարծես միայն թվերն են կառավարում և դուք եք, որ պայմանավորելու եք ներդաշնակ երկխոսությունը թվերի և անհատականության միջև»:

Ռեկտորը խոսեց ԲՏՃՄ ոլորտի մասնագիտությունների հանդեպ կառավարության ուշադրության, ժամանակակից աշխարհում միջգիտակարգային պահանջների ու մոտեցումների մասին՝ այդ փոփոխությունների համատեքստում շնորհակալություն հայտնելով վերոհիշյալ ֆակուլտետների ղեկավարներին, ամբիոնների վարիչներին:

Ռեկտորը հույս հայտնեց, որ այս ֆակուլտետների շրջանավարտները կհամալրեն համալսարանի մասնագիտական ամբիոնները և ավագ դպրոցների ուսուցչական համակազմը: Համալսարանի ղեկավարը բոլորին մաղթեց նոր վերելքների հաղթահարում:

Նոր փոխներգործող ճանապարհին դեպի համալսարան բերող արահետները թող մշտապես պայմանավորեն ձեզ համար անձնային և մասնագիտական աճի զարգացում, որը 21-րդ դարի ուսուցչի կարևորագույն հմտությունների հաղորդակցման դրսևորումն է»:

Կենսաքիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Սիրինե Շողերյանը շնորհավորեց շրջանավարտներին և նշեց. «Ժամանակը շատ արագ անցավ՝ իրադարձություններով ու նվաճումներով, և ձեր համառության համառության շնորհիվ կարողացաք արժանապատվորեն հաղթահարել բոլոր դժվարություններն ու փորձությունները և հաստատել բարձրագույն կրթության վկայական ստանալու ձեր իրավունքը»: Դեկանը շրջանավարտներին հորդորեց՝ միշտ երազանքներ ու նպատակներ ունենան, դրանք իրականություն դարձնեն, համարձակ լինեն և հավատան իրենց ուժերին: Նաև մաղթեց՝ նոր նվաճումներ, մասնագիտական-բարձր ձեռքբերումներ, բոլոր ձեռնարկներում՝ հաջողություն, բարեկեցություն և անձնական երջանկություն:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան Գագիկ Դեմիրխանյանը հույս հայտնեց, որ շրջանավարտների մեծ մասը մուտք կգործի հանրակրթական հաստատություններ, որտեղ այս մասնագիտությունների գծով ուսուցիչների զգալի պակաս կա: Դեկանը նրանց առաքելությունը համարեց մատաղ սերնդի ճիշտ դաստիարակությունը՝ միտված մեր ինքնության պաշտպանությանը և մաթեմատիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի, ինժեներական գիտությունների հանդեպ սեր առաջացնելուն, ինչը այնքան կարևոր է մեր երկրի անվտանգության համար:

Դա մի ամբողջ ճամփորդություն էր...

Մեզ փոքրուց սովորեցնում են, որ ժամանակը թռչում է, բայց այդ խոսքերի իմաստը երկար ժամանակ մնում է սեփական ընկալումներից դուրս: Դպրոցական տարիները թվում են անվերջ, օրերն՝ անհամաչափ երկար: Սակայն գալիս է մի պահ, երբ հետ ես նայում ու հանկարծ գիտակցում՝ տարիներն իսկապես անցել են: Անհասկանալի մանկական արտահայտությունը դառնում է ստեղծված իրականություն:

Այժմ հասկանում եմ, որ կյանքի արագընթաց ռիթմի ներքո հաճախ չենք էլ նկատում, թե ինչպես է ժամանակը սահում մեր կողքով: Այն գնում է աննկատ, բայց թողնում ժառանգություն՝ հիշողություններ, փորձ ու կյանքի դասեր, որոնք մնում են որպես ուղենիշ:

Այսօր կանգնելով ՀՊՄՀ-ի դիմաց՝ ակամա հետ եմ գնում 2019 թվական, երբ առաջին անգամ ոտք դրեցի ոսկեգույն դռներից այն կողմ և դարձա աբովյանական: Շատ արագ հասկացա՝ համալսարանը միայն դասախոսությունների ու լսարանների մասին չէ: Կրթական այս պատերի ներսում գոյություն ունի մի ամբողջ աշխարհ, որտեղ ապրում են բազմաթիվ հարցեր, հիասթափություններ ու ոգևորություններ: Այդ լսարանները լցված էին մեր հույզերով, վստահ ու անհամարձակ քայլերով, ներքին մենախոսություններով ու երբեմն՝ լռությամբ: Այստեղ մենք միայն կրթություն չէինք ստանում՝ մենք մեծանում էինք:

Անցնելով համալսարանի միջանցքներով՝ հաճախ «բախվում ես» հուշերին: Մի անկյուն՝ որտեղ առաջին անգամ հանդիպեցիր ընկերներիդ: Մեկ այլ տեղ՝ որտեղ սրտիդ թրթիռով սպասում էիր քո հերթին բանավոր քննության ժամանակ: Այդ հիշողությունները դառնում են ժպիտ ու փարոս՝ հիշեցնելով, թե որտեղից ես սկսել:

Քննությունները, որոնք ժամանակին թվում էին մեծ փորձություններ, հետադարձ հայացքով դառնում են ինքնաճանաչման պահեր: Իսկ երբ քննական թերթիկիդ մեջ հանդիպում էիր այն հարցին, որին մի փոքր վատ էիր պատրաստվել, ի վերջո սովորում էիր պատասխանել ոչ միայն հարցին, այլ կյանքին:

Դասախոսի խստության ներքո, տարիների հեռվից տեսնում ես մի անկեղծ սեր՝ գիտելիքի, մեր հանդեպ ունեցած ակնկալիքների, երբեմն չարտահայտված հիացմունքի: Մենք հաճախ դա զգում էինք միայն վերջին դասին՝ երբ հայացքներն ավելի մեղմ էին, իսկ ժպիտը՝ մի քիչ կարոտով:

ՀՊՄՀ-ն ինձ տվեց այն ազատությունը, որտեղ կարող էի մտածել, կասկածել, երազել, և ինչու ոչ՝ սխալվել: Այդ սխալներն էլ էին կրթական, քանի որ դրանք սովորեցնում էին ոչ թե անթերի լինել, այլ՝ ճկուն ու խիզախ:

Այստեղ ես սովորեցի արտահայտվել՝ առանց վախենալու, սխալվել՝ առանց կոտրվելու, նորից փորձել՝ առանց ամաչելու: Համալսարանական կյանքը վերելքների ու վայրէջքների շարք չէր միայն: Դա մի ամբողջ ճամփորդություն էր՝ ինքդ քեզ ճանաչելու, փոխվելու, հասունանալու ճանապարհ:

Եվ հիմա, երբ ավարտին է մոտենում այս վեցամյա ուղին, իմ ներսում խառնվում են երախտագիտությունն ու կարոտը: ՀՊՄՀ-ն ինձ համար դարձավ դպրոց՝ կյանքի, հարաբերությունների, երազանքների ու պայքարի մասին: Դարձավ տուն, որտեղ ես ոչ միայն սովորեցի, այլ նաև իմաստավորեցի՝ ով եմ ուզում լինել:

Ու այժմ հստակ կարող եմ ասել. «Մեծերը ճիշտ էին՝ ժամանակն արագորեն թռչում է»:

Համալսարանն ավարտելիս մեզ մնում է գնահատել պահերը, ստեղծել հետագա ջերմ հիշողություններ ու շնորհակալ լինել տարիներ առաջվա մեր «ես»-ին՝ ամենաիմաստալից ճանապարհն ընտրելու և պատվով անցնելու համար...

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
2024-2025 ուստարվա Շրջակա միջավայրի մագիստրոս

Ֆակուլտետներ, որոնք կապված են համալսարանի ողջ գրանցման հետ

Սկզբնական կրթության, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետներ

Հուլիսի 3-ին Մանկավարժական համալսարանում ավարտական որակավորման վկայականներ հանձնեցին Սկզբնական կրթության և Պատմության և հասարակագիտության ֆակուլտետների շրջանավարտներին:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի 86 շրջանավարտից 28-ն ավարտել է կարմիր դիպլոմով, Սկզբնական կրթության ֆակուլտետի 237 շրջանավարտից 34-ը՝ նույնպես կարմիր դիպլոմով:

Ռեկտորը շնորհավորեց շրջանավարտներին և ընդգծեց, որ 1922 թվականին հիմնադրված մեր համալսարանը կապվում է այս ֆակուլտետների տարեգրության հետ, քանզի համալսարանի 1922 թվականին հրամանագրված առաջին՝ Մանկավարժության ֆակուլտետը մեկնարկել է նախադպրոցական, դպրոցական և արտադպրոցական բաժիններով:

Պատմության ֆակուլտետը ևս համալսարանի ողջ պատմության վկան է:

Սրբուհի Գևորգյանը փաստեց, որ երկու ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմն էլ իրենց աշխատանքի շնորհիվ շրջանավարտների մեջ ձևավորել են 21-րդ դարի ուսուցչին ներկայացվող փափուկ հմտություններ ու մասնագիտական գիտական ամուր գիտելիքներ:

«Սկզբնական կրթության ֆակուլտետի առաքելությունը, որ դրված է մասնագիտական գործունեության մեջ, անկրկնելի է՝ առաջին շփումը և երկխոսությունը մանկիկի հետ, հմուտ մասնագիտական ուղղորդմամբ ձևավորել երեխայի անհատականությունը նախադպրոցական տարիքից»,- ասաց ռեկտորը:

Նա նշեց, որ իր գործընկերների մեջ այսօր շատ են այդ ֆակուլտետի շրջանավարտները, և որ այն մարդկային կապիտալը, որը տալիս է այս համալսարանը, անկրկնելի է: Այս շրջանավարտները վաղը դառնալու են Մանկավարժական համալսարանի պատմության հպարտության, պատմության նոր որակի, առաքելության տարեգրության մասը՝ որպես Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի պատգամները իրականացնող սերունդ:

Ուսանողներին ավարտական վկայականներ են հանձնում ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, դեկաններ Հեղինե Խաչատրյանը և Էդգար Հովհաննիսյանը:

Դեկան Հեղինե Խաչատրյանը ֆակուլտետի անունից ջերմորեն շնորհավորում է շրջանավարտներին և մաղթում է նորանոր ձեռքբերումներ մասնագիտական գործունեության մեջ ու անձնական կյանքում. «Ստանալով ավարտական վկայականը՝ դուք ստանձնելու եք երեխայի հոգին ոչ միայն գիտելիքով, այլև մտերմությամբ ու սիրով ողողելու այդ մեծ առաքելությունը: Պատկերացրեք, որ հենց ձեր դասարանում է, որ առաջին անգամ երեխան վստահելու է ձեզ, հասկանալու է, փորձելու է, սխալվելու է, ձախողվելու է, նորից է փորձելու, և դուք եք, որ պետք է լուսավորեք նրա հոգին ու միտքը, դուք եք այն ձեռքը, որ պիտի բարձրացնի նրան, և ձեր հայացքն է, որ նրան պիտի ասի՝ դու կարող ես...

Տարիներ անց միգուցե ձեր սաները մոռանան մի շարք բանաձևեր ու կանոններ, բայց հաստատ կհիշեն այն ուժը, որ ներշնչել եք նրանց, այն վստահությունը, որ դուք եք հաղորդել: Ուստի մեր հասարակությունը թող գնահատի ու արժևորի ձեր այդ մեծ առաքելությունը՝ մարդկային մեծ վստահությամբ ու գանահատանքով»:

Միանալով բոլոր հնչած և հնչելիք շնորհավորանքներին՝ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանն ասաց. «Այսօր նվիրական օր է, որովհետև յուրաքանչյուրդ կերտում եք ձեր կյանքի պատմությունը: այսօր ձեր կյանքի պատմության ամենաշրջադարձային կետն է՝ դուք ստանում եք մասնագիտական որակավորում, որն ուղեկցելու է ձեզ ողջ կյանքի ընթացքում: Տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքները դուք ծառայեցնելու եք ձեր անձնական կարիերային, ընտանեկան բարեկեցությանը, և որ ամենակարևորն է՝ մեր պետությանը և երկրին, որովհետև հայրենիքի սահմանները պաշտպանվում են ոչ միայն զենքով, այլև գիտությամբ և կրթությամբ:

Անցնող տարիները՝ համավարակով ու պատերազմով, հեշտ չեն եղել ուսանողների համար, այսօր Պատմության և հասարակագիտության ֆակուլտետն ավարտում են նաև պատերազմի բովով անցած տղաներ, ավելին՝ ավարտում են ուսանողներ, որոնք ավարտական վկայականներ պետք է ստանային Ստեփանակերտում՝ Արցախի պետական համալսարանում: Ու եթե ուզում եք այսուհետև արցախցիները Ստեփանակերտում ստանան իրենց ավարտական վկայականները, պետք ձեր նվիրական առաքելությունը բարձր մակարդակով իրականացնեք, մանկավարժի որակավորումը բարձր պահեք: Երբեք չմոռանաք համալսարանում անցկացրած տարիները, որտեղ ամեն ինչ արել են ձեզ որակյալ կրթություն տալու համար, չմոռանաք, որ դուք վաղվա մեր գործը շարունակողներն եք»:

«...Որ քո էպոսի մի տողը դառնամ»

Բանասիրական և Օտար լեզուների ֆակուլտետներ

«1930 թվականին ձևավորված Բանասիրական ֆակուլտետը պայմանավորում է յուրաքանչյուր ուսանողի ու շրջանավարտի լեզվի իմացության, լեզվի անարատ պահպանության, լեզվի միջոցով մեր ինքնությունը պահպանելու, մեր պատմության, մշակույթի ապագային միտված լեզվամշակութային և գիտական նվաճումները ուղղորդելու առաքելությունը»,-ասաց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա ջերմորեն շնորհավորեց ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանին, ամբիոնների վարիչներին և ողջ պրոֆեսորադասախոսական կազմին՝ ծանր, բայց պատվաբեր առաքելության ներքո մշտապես ուսանողների կողքին լինելու համար:

Ռեկտորը խոսեց բուհի ամենաերիտասարդ՝ Օտար լեզուների ֆակուլտետի առաքելության մասին ևս, որը հիմնվել է 2000 թվականին, բայց և հսկայական ներդրում է ունեցել համալսարանի գունապնակի մեջ՝ հստակ ուրվագծելով իր տեղը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև միջազգային տիրույթներում՝ փառք և պատիվ բերելով Խաչատուր Աբովյանի անունը կրող Մանկավարժական համալսարանին: Նա շնորհավորեց պրոֆեսոր Տիգրան Միքայելյանին և ողջ պրոֆեսորադասախոսական կազմին՝ դասավանդման լավագույն մեթոդներով ուսանողներին լեզուն ներկայացնելու համար՝ որպես մասնագիտություն, ժամանակակից գործիքակազմ, որպես մշակութային հաղորդակցման կարևորագույն միջոց և որպես կարևորագույնը 21-րդ դարի ուսուցչին ներկայացվող փափուկ հմտություններից:

Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց շրջանավարտներին, որոնք հանրապետությունում հետայսու պայմանավորելու են ուսուցչի մասնագիտական որակավորումը որպես Մանկավարժական համալսարանի ձեռագիր, այդ որակը նոր մակարդի բարձրացնելու Հայաստանի Հանրապետության դպրոցներում, լեզվի զարգացման՝ հայոց լեզվի և օտար լեզուների պահպանման, գլոբալ աշխարհում Հայաստանի՝ իր ուրույն տեղը տեսնելու և ազգային նկարագիրը պահպանելու կարողությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով շրջանավարտներին՝ ռեկտորը բոլորին մաղթեց բարի ճանապարհ՝ որակական նոր զարգացումներով գիտելիքի, կարողության, հմտության, անձնական և անհատական ձեռքբերումները ընդհանուրին ծառայեցնելու առաքելությամբ, անձնային և մասնագիտական աճի համատեքստում՝ փայլուն ձեռքբերումներ:

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը ներկայացրեց միջնադարյան Ֆրանսիայում, հերթական անհաջողություններից հետո, ուսանողների բառերով ստեղծված միջազգային հիմնի պատմությունը, որը վերնագրել են՝ «Երջանիկ լինենք, քանի դեռ երիտասարդ ենք»՝ դրանով արտահայտելով իրենց կարծիքն ու ըմբռնումը: Սկզբում դասախոսներն այն չեն ընդունել, բայց հետո ավարտվել է ուսանողների և դասախոսների համերաշխությամբ, և դասախոսները գոչել են՝ կեցցեն ուսանողները: Եվ եթե ուսանողներն էլ գոչել են՝ կեցցեն պրոֆեսորները, դա նշանակում է՝ դասախոսները գոհ են ուսանողներից և հակառակը:

«Կեցցեն ուսանողները,-բարձրաձայնեց պրոֆեսոր Միքայելյանը՝ ընդգծելով,-սա այն կամուրջն է, որը կապում է ձեռքբերումների այս ափը, կամուրջը չի քանդվելու և համալսարանը՝ ձեր հոգու տունը, միշտ սպասելու է ձեզ»:

Շրջանավարտներին, նրանց ծնողներին ու հարազատներին օրվա խորհրդի առթիվ շնորհավորեց Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը՝ նշելով, որ գիտության լույսը բոլոր ժամանակներում սիրո և ակնածանքի առարկա է եղել, սիրո և ակնածանքի առարկա է եղել նաև ուսուցիչը՝ նրան վստահել են և հավատացել: Դեկանն ընդգծեց, որ ֆակուլտետի շրջանավարտները հաջողությամբ համալրում են հանրապետության ուսուցչական համակազմի շարքերը, նաև հաջողությամբ հաղթահարում կամավոր ատեստավորման պահանջները:

«Ես լիահույս եմ, որ դուք ևս հրաշալի ուսուցիչներ եք դառնալու և ձեր հոգու լույսը փոխանցելու եք մատաղ սերնդին»,-ամփոփեց իր խոսքը Աշոտ Գալստյանը:

Նրա կարծիքով ուսանողներն առանց վարանելու կասեն.

Իմ սուրբ Հայաստան, ինչու եմ ծնվել,
ծնվել եմ, որ քո մի շողը դառնամ,
որ քո էպոսի մի տողը դառնամ,
որ մի ափ բերրի քո հողը դառնամ,
քո չունեցածի համար եմ ծնվել:

1-6 -րդ էջերի նյութերը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ



Հայրենասիրության լավագույն դպրոցը սկսվում է սահմանից

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի շրջանավարտ Խաչիկ Խամիսյանը «Հայոց պատմություն» է դասավանդում ՀՊՄՀ Հենակետային վարժարանում (Ավագ դպրոցում): Հունիսի 10-ից հուլիսի 4-ը նա մասնակցել է վարժական հավաքների, եղել սահմանապահ դիրքերում և կամային ու անձնական որակների դրսևորման համար պարգևատրվել է ՀՀ Պաշտպանության նախարարության պատվոգրով:

Հուլիսի 7-ին համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանն անձամբ նրան հանձնեց ավարտական վկայականը: Այստեղ ևս Խաչիկ Խամիսյանը ցուցաբերել է լավ արդյունքներ և բուհն ավարտել է գերազանցության վկայականով: Վկայականների հանձնման արարողությանը նա գտնվում էր դիրքերում, ինչի համար հպարտ է:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի հանրակրթական դպրոցներում տղամարդ ուսուցիչների զգալի պակաս կա, և ՀՊՄՀ ռեկտորն ու բուհի ղեկավար կազմն ամեն ինչ անում են շրջանավարտ տղաներին դպրոցներին կապելու ուղղությամբ:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը որոշեց Խաչիկ Խամիսյանին աջակցել հետբուհական կրթության հարցում. դպրոցից չկտրված նա իր ուժերը կփորձի նաև գիտական ոլորտում, իսկ ֆինանսական ծախսերը կհոգա համալսարանը:

Հանդիպմանը ներկա Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր, Հենակետային վարժարանի տնօրենի խորհրդական Նաիրա Սաֆարյանը բարձր է գնահատում Խաչիկ Խամիսյանին՝ որպես օրինակելի ուսուցիչ, որին հարգում ու սիրում են ուսուցչական կոլեկտիվն ու աշակերտական համայնքը:

Խաչիկ Խամիսյանը «Պատմություն» առարկայով հետաքրքրվել է դեռևս դպրոցական տարիներից, մասնագիտության հանդեպ տածած սիրո համար պարտական է իր պատմության ուսուցչին: Եվ ահա 2017 թվականին ընդունվել է ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ, որի ընթացքում երկու տարի ծառայել է Հայաստանի զինված ուժերում:

Վարժանքների ընթացքում Խաչիկը մասնակցել է տեսական և գործնական պարպմունքների, ապա հատուկ ստորաբաժանումում անցել ծառայություն՝ 14 օր եղել մարտական հերթապահության:

Խաչիկ Խամիսյանը որպես պատմաբան ու հայրենասեր անհատ՝ ծառայությանը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվել, սահմանին գտնվելու ընթացքում էլ ավելի է արժևորել հայրենիքի հանդեպ սերը:

Մանկավարժական համալսարանի ուսանողը նաև գերազանցությամբ պաշտպանեց մագիստրոսական թեզը: Հիմա իր օրինակով նա փորձում է հայրենիքի հանդեպ սերը նորովի փոխանցել աշակերտներին ու գործընկերներին, միաժամանակ նվիրվելով ուսուցչի առաքելությանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Արդեն մագիստրոս



Երբ առաջին անգամ մտա Մանկավարժական համալսարանի դռներից ներս, դեռևս սովորում էի Հենակետային վարժարանում, եկել էի ուսանողական կյանքի մեջ մի փոքր ինտեգրվելու և նաև կողքի աչքով էլ ապագային հետ մի փոքր ծանոթանալու: Շատ չանցած, արդեն լրագրության բաժնի առաջին կուրսի ուսանող էի՝ մի մասնագիտության, որը միաժամանակ և՛ պարտավորեցնում է, և՛ պահանջում անընդհատ որոնում ու զգայունություն աշխարհի նկատմամբ: Այդ օրվանից ի վեր համալսարանն ինձ համար դարձավ ոչ միայն կրթություն ստանալու վայր, այլև մեծ, տարբեր երանգներով կյանք՝ իր ուրախություններով, հիասթափություններով, մարդկանցով ու հնարավորություններով:

Բակալավրիատից մինչև մագիստրոսական ճանապարհը երկար ու հագեցած էր: Ես սովորում էի դասերից դուրս էլ: Այստեղ հասկացա, որ միայն լսարանում նստելով մասնագետ չես դառնում: Դրա համար է, որ ուսումնառության ընթացքում հաճախ ենք գնում տարբեր պրակտիկաների, որովհետև դու այդ ժամանակ տեսնում ես մասնագիտությունդ կողքից, լինում ես «դեպքի վայրում», նայում ես արդեն մասնագետ մարդուն, հաճախ սովորում ես նրա սխալի վրա և մտովի լուծում այն: Ունենալով լավագույն դասախոսական անձնակազմ՝ դիրքորոշումս հստակ է՝ ես գերազանց կրթություն եմ ստացել: Կրթությունը, սակայն, միայն փոխանցած տեղեկությունները չեն: Դասախոսներիցս մեկը մի անգամ ասաց. «Լրագրությունը պետք է գալիս ամենուր, անգամ՝ առօրյա կյանքում». այսօր ես դրանում լիարժեք համոզված եմ:

Դու աստիճանաբար զարգանում ես ես նաև այն ծրագրերի մեջ, որոնցում ներգրավվում ես: Դու ձևավորվում ես թիմային աշխատանքով, ուսանողական խորհրդի ներսում կազմակերպած միջոցառումներով, մշակութային նախագծերով, և այն պատասխանատվությամբ, որն ի վերջո, դառնում է սեփականդ:

Ուսանողական խորհրդում ակտիվությունն ինձ համար ինքնանպատակ գործունեություն չեղավ: Այն դարձավ հարթակ, որտեղ սովորեցի համակարգել, համախմբել, ներկայացնել ու պաշտպանել: Դա այն տեղն էր, որտեղ փորձեցինք համատեղել նպատակը՝ միաձուլել կրթության, հետաքրքրականի և հաճելիի հետ: Արդեն 7 տարի է, ինչ Խանջյան փողոցով անցնելիս անպայման ոսկեգույն դռները կանչում են ներս, իսկ ներսում էլ՝ 101 սենյակը, որտեղ այնքան լավ հիշողություններ ունեմ: Բայց, եթե հարցնեք՝ որն էր ամենամեծ ձեռքբերումս, կասեմ՝ մարդիկ ու նրանց տված «դասերը»: Բազում ընկերների եմ ինձ հետ տանում համալսարանից, որոնք ձևավորվել են տարբեր ծրագրերի ժամանակ, երբ կեսգիշերին էլ քննարկում ես, թե հաջորդ օրն ինչպես ավելի լավ անցկացնել միջոցառումը կամ ինչպես լուծել տեխնիկական խնդիրներն՝ առանց բողոքելու, և կամ զոհում ես սեփական քնիդ ժամերը, որպեսզի մի քանի րոպե ավելի լինեք միմյանց հետ, տարբեր թեմաների մասին խոսեք, մի կտոր հաց կիսեք միասին, երգեք, տխրեք և, իհարկե, ուրախանաք միասին: Ահա դրանք են այն կապերը, որոնք դուրս են գալիս լսարանից ու մնում կյանքում՝ ինչպես լուսանկարներ, որոնք երբեք չեն մաշվում:

Նշածս դրական պատմությունները չէին ընդգծվի, եթե իրենց կողքին չլիներ բացասականը: Եղել են նաև հիասթափություններ՝ մասնագիտական, կրթական, ընկերական: Դրանք էլ են ներառվում լավագույնների մեջ, լավագույն «վատերի» մեջ: Բայց չէ՞ որ հենց կյանքի բացասական կողմերի շնորհիվ է, որ տեսնում ու գնահատում ես դրականը, ինքնագիտակցությանդ մակարդակը բարձրանում է, և սկսում ես հասունության և զարգացման մի նոր փուլ:

Հիմա, երբ մագիստրոսական ճանապարհի վերջին էջն եմ թերթում, վստահ եմ, որ համալսարանն ինձ տվել է ավելին, քան մասնագիտություն: Համալսարանն ինձ սովորեցրեց համբերել ու պայքարել, խոսել ու լռել՝ երբ պետք է, ծրագրել ու չընկճվել ձախողումից, գնահատել մեկ տասնյակ մարդկանց, որոնք հավատացին, լսեցին, օգնեցին ու երբեք չկասկածեցին, որ այս ուղին իմն էր: Սովորել եմ գնահատել ինձ տրված յուրաքանչյուր բան և անհասանելին ամեն գնով ձեռք բերել: Սովորեցի, որ ինչ էլ լինի, չպետք է մոռանալ, թե ով ես դու, և անհրաժեշտ է հնարավորինս օգտագործել քո բոլոր ձեռքբերումները: Մանկավարժական համալսարանն ինձ համար միշտ կմնա կյանքի դպրոց՝ ոչ միայն այն, ինչ սովորեցրեց, այլև այն, ինչ փոխեց իմ մեջ:

Մեր բոլոր ուսանողներին էլ խորհուրդ կտամ, որ երբեք բաց չթողնեն այն հնարավորությունները, որոնք կարող են ունենալ հենց ուսանող լինելով, քանի որ լինել ուսանող՝ նշանակում է գտնվել կյանքի առանցքի կիզակետում:

Ժենյա ԱԲԳԱՐՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
Լրագրություն բաժնի մագիստրոս

«Երկնքի թիմը» նոր հարձակվող ունի

Նա չդարձավ լեգենդ իր ակումբում, բայց հավերժ կվայելի ֆուտբոլային ողջ հասարակության սերը:

2025 թվականի հուլիսի 3-ին Իսպանիայի Սամորայի գավառում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով մահացավ անգլիական «Լիվերպուլի» և Պորտուգալիայի ազգային հավաքականի 28-ամյա հարձակվող Դիոգու Ժոտան:

Ըստ նախնական տվյալների՝ Ժոտան վերջերս վիրահատվել էր. թոքերի հետ կապված խնդիրներ ուներ, ինչի պատճառով խուսափում էր ինքնաթիռով թռիչքներից: Այդ չարաբաստիկ օրը նա շտապում էր նավահանգիստ, որպեսզի մեկնի Անգլիա և միանա թիմին: Ժոտայի հետ ավտովթարի զոհ է դարձել նաև նրա 26-ամյա եղբայրը՝ Անդրե Ժոտան:

Դիոգուն «Լիվերպուլ» տեղափոխվեց 2020 թվականին, կրեց 20 համարի մարզաշապիկը և ավարտված մրցաշրջանում թիմի հետ նվաճեց 20-րդ Պրեմիեր լիգայի չեմպիոնի տիտղոսը: Այս երեք 20-ի

խորհուրդն ամբողջացավ «Լիվերպուլ»-ի պաշտոնական հայտարարությամբ այն մասին, որ 20 համարի մարզաշապիկը շրջանառությունից հանում են՝ ի հիշատակ Ժոտայի:

Այս համարը հավերժ կպատկանի նրան:

Հունիսին նա հաղթեց Ազգերի լիգան՝ Պորտուգալիայի ընտրանու հետ:

Դեպքից չորս օր առաջ Ժոտան պաշտոնապես ամուսնացել էր իր սիրելիի՝ Ռուտե Կարդոզուի հետ:

Համաշխարհային ֆուտբոլային ակումբներն ու անհատ ֆուտբոլիստները, մեկը մյուսի հետևից, ցավակցական նամակներ են տեղադրում իրենց սոցիալական էջերում՝ ուղղված Դիոգուի ընտանիքին և «Լիվերպուլին»:

Ժոտան յուրահատուկ էր:

Նրա դրիբլինգները, գոլերը, նվիրումը հավերժ կմնան երկրպագուների հուշերում:

Նվիրում, սեր, պայքար, ոգի. այն ամենն, ինչ նա դնում էր խաղադաշտում: Իսկ նրա ժպիտն ու գոլերը տոնելու յուրօրինակ ժեստերը ավելի էին գեղեցկացնում ֆուտբոլը:

Վերջին ամիսներին աշխարհը նրան տվեց հնարավոր ամեն ինչ՝ տիտղոսներ, գոլեր, այդպիսով ասես նրան դարձնելով ավելի երջանիկ՝ ցավալի հրաժեշտից առաջ:

Ժոտայի հետ կատարվածն ու հետագա արձագանքը ևս մեկ անգամ ապացուցեցին, որ ֆուտբոլը իր շուրջ է հավաքում բոլորին՝ անկախ սեռից, ակումբային պատկանելությունից ու նախասիրություններից:

Հիմա արդեն՝ այս պահին, ոչ միայն «Լիվերպուլը», ոչ միայն մերսիսայդյան երկրպագուները, այլ ամբողջ աշխարհն է միաբերան երգում. «Diogo, you'll never walk alone» «Երկնքի թիմը» ի դեմս Պելեի, Մարադոնայի, Կրույֆի, Էմիլիանո Սալայի, նոր հարձակվող ունի՝ Դիոգու Ժոտան:

Արգիշտի ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ Հեռուստառադիոլրագրության
բաժնի 4-րդ կուրսի ուսանող

«Թանգարանի կրթական հնարավորությունները ֆորմալ կրթության ոլորտում». հնգօրյա դասընթաց Մանկավարժականում

Հուլիսի 7-11-ը ՀՊՄՀ-ում անցկացվեց «Թանգարանի կրթական հնարավորությունները ֆորմալ կրթության ոլորտում» խորագրով դասընթացը: Ձեռնարկն անցկացվեց ՀՊՄՀ-ի, «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամի հետ համատեղ՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

5-օրյա դասընթացի նպատակն էր ընդլայնել և զարգացնել թանգարանների դերը ֆորմալ կրթության գործընթացում՝ ամրապնդելով թանգարան-դպրոց համագործակցությունը, ներկայացնելով թանգարանները որպես կրթական ռեսուրս և հարթակ՝ բարձրացնել դպրոցական ուսուցման արդյունավետությունն ու ընկալելիությունը, ստեղծել արդյունավետ հարթակ թանգարանների ներառման համար՝ նոր չափորոշիչների գործնական կիրառման գործընթացում:

Բացի այդ, ծրագիրը նպատակ ուներ փուլային գործունեության 3 տեսակի՝ հետազոտություն, դասընթաց և մեթոդական ձեռնարկ-ուղեցույցի հրատարակման միջոցով նպաստել դպրոցական ծրագրերին համահունչ թանգարանային կրթական ծրագրերի ստեղծմանը, մասնագիտական ձեռնարկի հրատարակմանը, որոնք կապահովեն թանգարան-դպրոց համագործակցության ինստիտուցիոնալացումը:

Ծրագրի մասնակիցներին ողջունեց և ձեռնարկը կարևորեց ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Նա նկատեց՝ վերջին տասնամյակում ՀՀ-ում թանգարային մանկավարժություն գիտակարգի զարգացումը խթանեց թանգարանների կողմից իրականացվող կրթական ծրագրերի զարգացմանը: Նա թանգարանի և ոչ ֆորմալ կրթության հաստատությունների (դպրոց) համագործակցության ասպարեզում կարևորեց

ինչպես թանգարանային մանկավարժության դերը, այնպես էլ թանգարան-դպրոց առավել նպատակային, ծրագրային և համակարգված համագործակցությունը. «Թանգարանային մանկավարժությունը չի փոխարինում դպրոցական կրթությանը, այլ հարստացնում է այն, ապահովում կրթության բազմակողմանիությունը»,-նշեց Մարիամ Իսպիրյանը:

Ելույթ ունեցան «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» հասարակական կազմակերպության տնօրեն, Երևանի Ռուսական արվեստի թանգարանի տնօրեն Մարինե Մկրտչյանը, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի պատվավոր նախագահ Հռիփսիմե Պիկիչյանը: Մարինե Մկրտչյանը փաստեց՝ թանգարաններն ու դպրոցներն ամբողջ աշխարհում համագործակցում են. թանգարանը դառնում է գործնական աշխատարան:

Դասընթացի առաջին օրը հանդես եկավ սեմինարավար-փորձագետ, ՀՊՄՀ Թանգարանի տնօրեն, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ Ալվարդ Գրիգորյանը:

Նա անդրադարձավ թանգարանային մանկավարժությանը՝ որպես թանգարանի մշակութակրթական գործունեության տեսական հիմք, ներկայացրեց թանգարանային լսարանի վերաբերյալ ուսումնասիրությունը, թանգարանում տարբեր տարիքի դպրոցականների հետ աշխատանքի կազմակերպումը, թանգարանային ցուցադրության հիման վրա կրթամշակութային ծրագրերի նախապատրաստման և անցկացման մեթոդական սկզբունքները:

Հուլիսի 9-ին դասընթացին մասնակցող ուսուցիչներին ողջունեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության պետ Աստղիկ Մարաբյանը: Նա կարևորեց դպրոց-թանգարան կապը՝ թանգարանների անսահմանափակ հնարավորությունների համատեքստում անդրադառնալով այդ համագործակցության մի շարք առանձնահատկությունների:

Սեմինարավար-փորձագետ Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց թանգարանային կրթությունը որպես միջառարկայական ուսուցման աջակցող հարթակ, որպես չափորոշչահեն կրթության (ուսուցման) միջավայր՝ խոսելով մեթոդների և գործիքների մասին:

Սեմինարավար-փորձագետ Ալվարդ Գրիգորյանը թանգարանի կրթական գործունեության համատեքստում խոսեց հումանիստական մանկավարժության և թանգարանային հաղորդակցության տեսության, իսկ սեմինարավար-փորձագետ Մարինե Մկրտչյանը՝ թանգարանային և դպրոցական մանկավարժների համագործակցության մասին:

Հուլիսի 10-ին լավագույն կրթական ծրագրերը ներկայացրին տարբեր թանգարանների տնօրեններ, իսկ հաջորդ օրը անցկացվեցին մեթոդական քննարկումներ:

Պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը խոսեց դասընթացի ծրագրի շրջանակում ձևավորված դպրոց-համալսարան համագործակցային նոր ձևաչափի մասին՝ ընդգծելով ուսուցիչների կարևոր առաքելությունն այդ գործընթացում, նաև վստահեցնելով՝ Մանկավարժական համալսարանը մշտապես աջակցել, ուղղորդել և համագործակցել է: Պրոռեկտորը կարևորեց նաև համագործակցությունը համալսարանական նոր լաբորատորիաների հետ, որոնք նպատակային ծրագրեր են իրականացնում:

Պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը ևս ողջունեց նախաձեռնությունը՝ փաստելով, որ ժամանակն է թանգարաններն այլ տեսանկյունից ընկալել և լիարժեք օգտագործել նրանցում առկա ռեսուրսները: Նա կարևորեց թանգարանները որպես կրթական հնարավորություններ դիտարկելը՝ ընդգծելով, որ նախագծային աշխատանքների համատեքստում միջառարկայական կապերի օգտագործմամբ շատ հետաքրքիր կապեր կարելի է ստեղծել նոր սերնդին հզորացնելու համար:

Եռօրյա դասընթացի նպատակն էր թանգարանը կրթության մաս դարձնելու նոր ձևաչափերի ներդրման հնարավորությունների բացահայտումն ու ուսուցումը:

«Թանգարանի կրթական հնարավորությունները ֆորմալ կրթության ոլորտում» դասընթացին մասնակցում է 36 մենթոր դպրոցի ուսուցիչ և 14 թանգարանային մանկավարժ:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Երբեմն կյանքը քեզ հարցնում է. «Դու պատրա՞ստ ես դուրս գալ քո հարմարավետության շրջանակներից և տեսնել, թե ինչ կա դրանից այն կողմ»: Ես չէի սպասում, որ այդ հարցը կգա ուսանողական շարժունության տեսքով, բայց հենց այդպես էլ եղավ:

Ես Մոնիկան եմ, սովորում եմ Հայկական պետական մանկավարժական համալսարանի ինֆորմատիկայի բաժնում: Միշտ մտածել եմ, որ կրթությունը սահմանափակվում է լսարաններով, ծրագրերով, քննություններով: Բայց երբ ստացա հնարավորություն մեկ կիսամյակ սովորելու Լիտվայի Վիտաուտաս Մագնուս համալսարանում, հասկացա, որ իրական կրթությունը հաճախ սկսվում է այն պահին, երբ լքում ես քեզ ծանոթ ամեն ինչ:

Որպես ակտիվ ուսանող, կամավոր, ուսանողական խորհրդի անդամ և մի մարդ, որը սիրում է բացահայտել նոր մշակույթներ, մարդկանց, միշտ փնտրել եմ ինքնաբացահայտման նոր հնարավորություններ: Շարժունությունն ինձ տվեց հենց դա՝ նոր երկիր, նոր մարդիկ, նոր փորձառություն և ամենակարևորը՝ նոր հայացք սեփական հնարավորություններին:

Երբ ուսումնական ծրագիրը դառնում է կյանքի դաս

Կյանքը գիտելիք է խողովակաշարերում և թվերում, պատմություններում և բանաձևերում, բայց եթե այդ ամենը միայն դասագրքերում մնա, այն կդառնա մերկ ու դատարկ: Սակայն երբ ուսումնական ծրագիրը դառնում է փորձի սահնակ, որտեղ մարդն իր ոտնահետքերով վայելում է դժվարությունները, հաղթանակներն ու կորուստները, այն այդ պահին դառնում է հոգևոր ուղեցույց:

Այսինքն՝ երբ սովորում ես չվախենալ սխալվելուց, երբ գիտակցում ես, որ ամեն մի ուսումնական թեմա խառնված է կյանքի չդասված դասերին, ուսումնական ծրագիրը դառնում է ոչ թե միայն գիտելիքի հավաքածու, այլ քո անձնական կայացման ուղին: Ուսումնական ծրագիրը դառնում է կյանքի դաս, երբ հասկանում ես, որ իրական կրթությունը ոչ թե արհեստական նպատակներին ծառայող նյութ է, այլ՝ մարդկային հնարավորությունների բացահայտման ու կյանքի իմաստավորման ճանապարհ:

Մարդիկ, որոնց հանդիպեցի Լիտվայում, եկել էին աշխարհի տարբեր անկյուններից՝ Եվրոպայից, Ասիայից, Հարավային Ամերիկայից: Երբ կողքիդ կանգնած են ընկերներ աշխարհի տարբեր անկյուններից, հասկանում ես, որ «տարբերվելը», ոչ թե պատնեշ է, այլ կամուրջ: Մեզ տարբերել են լեզուները, հավատքները, սովորությունները, բայց մեզ միավորել է նույն հարցը՝ «Ով եմ ես այս մեծ աշխարհում»: Մենք տարբեր մշակույթների կրողներ էինք, բայց մեզ միավորում էր նույն բանը՝ ինքներս մեզ գտնելու, մեր ներուժը բացահայտելու ձգտումը: Ու հենց այդ բազմազանությունն էր, որ իմ ուսումնառության ընթացքը դարձրեց ավելի հագեցած, հետաքրքիր ու արժեքավոր:

Հասկացել եմ, որ ունենալ տարբեր ազգությունների ընկերներ՝ նշանակում է աշխարհին նայել ավելի լայն անկյունից: Դա քեզ սովորեցնում է հանդուրժող լինել, բաց մտածել, կասկածի տակ դնել սեփական կարծիքդ և ավելի վստահ ձևավորել քո հայացքները:

Ի՞նչ խորհուրդ կտամ ապագա ուսանողներին

Եթե մտածում եք, որ շարժունությունը պարզապես դասընթաց է կամ գրավիչ բառ ձեր ռեզյումեի համար, սխալվում եք: Դա ձեր կյանքը ժամանակավորապես շուռ տալու, ինքներդ ձեզ նորովի ճանաչելու և թաքնված ներուժը բացահայտելու հրաշալի հնարավորություն է: Իմ միակ խորհուրդն է՝ չվախենալ: Չվախենաք լքել սովորականը, սխալվելուց, նոր փորձառություններ ունենալուց, որովհետև հենց այդ պահին է սկսվում իրական աճն ու բացահայտումը:

Ինձ համար VMU-ն պարզապես նոր համալսարան չէր: Դա մի ամբողջ աշխարհ էր, որտեղ ես ավելի լավ ճանաչեցի ինքս ինձ, բացահայտեցի տարբեր մշակույթներ, սովորեցի հաղթահարել վախերս: Իսկ տուն վերադառնալիս հետս բերեցի ոչ միայն հիշողություններ, այլ վերադարձա որպես ավելի ուժեղ ու հասունացած անհատ:

Այս ամենը հնարավոր եղավ, քանի որ իմ ուսումնական ճանապարհի սկիզբը դրվել է ՀՊՄՀ-ում: Շնորհակալ եմ իմ բուհին, որ տվել է ինձ գիտելիք, համարձակություն և այն հարթակը, որտեղից կարող եմ վստահ նայել ինձ ընձեռված նոր հնարավորություններին: Ու գիտեմ՝ սա դեռ սկիզբն է:

Մոնիկա ՊՈՂՈՍՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ